

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 20/2

3 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Հենրիկ Բավեյանի 02.09.2014 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 20.08.2014 թ-ի թիվ 212 որոշման դեմ:

Ա/Ձ Հենրիկ Բավեյանի գանգատում բերված հիմնական փաստարկները.

20.08.2014 թ-ի ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ-ի հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու վերաբերյալ թիվ 212 որոշմամբ գանգատաբերի չկատարված հարկային պարտավորությունների հանրագումարը 25.07.2014 թ-ի դրությամբ կազմում է 371.398 դրամ, որն ըստ որոշման առաջացել է 2009 թ-ի հուլիսից մինչև 2012 թ-ի դեկտեմբերն ընկած ժամանակաշրջանի համար հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գումարները օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու համար:

Ա/Ձ Հենրիկ Բավեյանը հայտնում է, որ անհիշելի ժամանակներից գործունեություն չի իրականացրել, հետևաբար իր համար անհասկանալի է, թե ինչի հիման վրա է հարկային տեսչությունը հաշվարկել պարտավորությունները: Ավելին, իր անհատ ձեռներեցի վկայականը ժամկետային է և գործունեության ժամկետը մինչև 01.01.1999 թ-ն է, ուստի հարկային մարմինը պարտավոր էր իրեն լուծարել:

Նման պայմաններում ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 20.08.2014 թ-ի թիվ 212 որոշումը հիմնավորված չէ, ուստի Ա/Ձ Հենրիկ Բավեյանը խնդրում է այն վերանայել, քանի որ իր պարագայում չէին կարող հարկային պարտավորություններ առաջադրվել:

Միաժամանակ Ա/Ձ Հենրիկ Բավեյանը խնդրում է դիմումը չբավարարելու դեպքում տալ պարտավորությունների առաջացման մանրամասն հաշվարկ և հարկ վճարողի հաշվառման քարտերի պատճենները՝ պարտավորությունները դատական կարգով վիճարկելու նպատակով:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Հենրիկ Բավեյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 2014 թ-ի օգոստոսի 20-ին ընդունել է թիվ 212 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 25.07.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Հենրիկ Բավեյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 371.398 դրամ (2009 թ-ի հուլիսից մինչև 2012 թ-ի դեկտեմբեր ամիսների նվազագույն սոց. վճար), որոնք ենթակա են գանձման:

Ա/Ձ Հենրիկ Բավեյանի հարկային գործի և անձնական հաշվի քարտերի ուսումնասիրությունից պարզվել է, որ համաձայն Ա/Ձ-ի կողմից հարկային տեսչություն ներկայացված թիվ 01Ա 038213 վկայականի թիվ 001 ներդիրի, գործունեության ժամկետը սահմանված է մինչև 01.01.1999 թ-ը: Սակայն «իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 30-րդ և 31-րդ հոդվածների համաձայն անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցումը դադարում է

համապատասխան դեպքերում: Քննարկվող դեպքում Ա/Ձ Հենրիկ Բավեյանի պետական գրանցումը պետք է դադարեր նրա դիմումի հիման վրա: Սակայն, Ա/Ձ Հենրիկ Բավեյանի կողմից նման դիմում չի ներկայացվել:

Ա/Ձ Հենրիկ Բավեյանի կողմից 02.10.1999 թ-ին հայտարարություն է ներկայացվել ՏՀՏ 01.10.1999 թ-ից անորոշ ժամկետով գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ, այսինքն՝ Ա/Ձ-ի վկայականի գործողության ժամկետը մինչև 01.01.1999 թ-ը սահմանված լինելու պարագայում Ա/Ձ Հենրիկ Բավեյանը 01.01.1999 թ-ից հետո շարունակել է գործունեություն ծավալել և ՏՀՏ է ներկայացրել նաև 1999 թ-ի 2-րդ կիսամյակի ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն:

Ա/Ձ Հենրիկ Բավեյանը մինչև 01.05.2006 թ-ը պարտադիր սոցիալական ապահովության վճարի նվազագույն գումարների գծով պարտավորությունից բացի ունեցել է նաև եկամտահարկի գծով 10.1 հազ. դրամ պարտավորություն, որը վճարվել է 2007 թ-ին:

Քննարկվող դեպքում «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արտոնությունների կիրառման մասին ՀՀ օրենքով սահմանված արտոնություններից օգտվելու վերաբերյալ գրավոր դիմում Ա/Ձ Հենրիկ Բավեյանի կողմից հարկային տեսչություն չի ներկայացվել, ինչը նշված օրենքի 2-րդ հոդվածի համաձայն պարտադիր պայման էր:

Բացի այդ, Ա/Ձ Հենրիկ Բավեյանի կողմից պետական գրանցման վկայականը չի հանձնվել ՏՀՏ և համաձայն մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի՝ 01.01.2009 թ-ից մինչև 31.12.2012 թ-ն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկվել է 371.398 դրամ պարտադիր սոցիալական ապահովության վճարի գումար, իսկ մինչև 31.12.2008 թ-ի համար հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարի գումարները համաձայն «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» թիվ ՀՕ-258-Ն ՀՀ օրենքի դրույթների զիջվել են՝ գումարով 569.492 դրամ:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված պահանջին՝ պարտավորությունների առաջացման մանրամասն հաշվարկ ներկայացնելու վերաբերյալ, ապա նման տեղեկատվություն ստանալու համար գանգատաբերին անհրաժեշտ է դիմել հաշվառման վայրի տարածքային հարկային տեսչություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Չ Ու մ է՝

ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 20.08.2014 թ-ի թիվ 212 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ